

ԿՈՄԻՏԵ
(կլաիմի) և գործունեության համառոտ ուրվագիծ)
Ա. Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

Հայ մշակույթի վերանորոգվող կյանքը XVIII դ. առաջ քաշեց նաև պատմագիրների մի ամբողջ համաստեղություն՝ Նսայի Հասան-Ջալալան, Արրահամ Երեմյան, Արրահամ Կրետյան, Սիմեոն Երեմյան, Խաչատուր Զուղալյանի և այլք։ Իր գիտական ժառանգության ընդգրկման լայնությամբ և խորությամբ, տաղանդի ուժով, ինչպես նաև ազգային-մշակութային գործունեության մեջ, XVIII դ. վերանորոգության շարժման գործիչների շարքում յուրահատուկ տեղ է գրավում Միքայել Չամչյանը։ Չամչյան-պատմաբանի, քերականագետի, մանկավարժի, հասարակական-մշակութային գործիչի և աստվածաբանի ժառանգությունն այսօր հիմնովի զարմանք, հիացմունք և պատկանոսք է պատճառում։ Մեկ մարդու ուժերից վեր, լայնահուն, հանրագիտական բնույթի գործ է կատարել Չամչյանը նշված բնագավառներում։ Հատկապես նշանակալից է նրա գեր հայ լեզվաշինարարության ասպարեզում։ Նա առաջինն էր, որ մաքրեց ու հղկեց լատինալիզացիայից խաթարված ոսկերիկի գրարարը և սերունդներին տրամադրեց ժամանակի կատարյալ քերականության դասագիրքը։ Անգնահատելի է Չամչյանի ավանդը նաև հայ ժողովրդի ամբողջական ու համահավասար պատմության ձևավորման գործում։ Նա առաջինն էր, որ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը դրեց զարգացման նոր ուղեգծի վրա։

Մ. Չամչյանի բաղմարտնչական ստեղծագործական ժառանգության յուրաքանչյուր կողմ հատուկ ուսումնասիրության և հետազոտության առարկա է։ Չնայած դրան, այսօր ինչպես նրա ընդհանուր գիտական ժառանգության, այնպես էլ այդ ժառանգության առանձին կողմերի (բացառությամբ, թերևս, նրա լեզվագիտական հայացքների), կյանքի և գործունեության մասին ընդհանրացնող ուսումնասիրությունները բացակայում են։

Միքայել (մկրտության անունով՝ Կարապետ) Չամչյանը ծնվել է 1738 թ. դեկտեմբերի 4-ին Կոստանդնուպոլսում։ Հայրը՝ Արրահամ Չամչյանը, պոլսահայ գաղթականի աշխատանքից էր։ Լինելով գրասեր անձնավորություն՝ նա միջոցներ չի խնայում իր զավակների դաստիարակության և կրթության համար։ Չամչյանը սկզբնական կրթությունը ստացել է տունային դաստիարակների մոտ և ծննդավայրի կաթոլիկական վարժարանում, որն ավարտելուց հետո աշակերտել է իրենց ընտանիքի հեռավոր ազգական, արքունի ոսկերիչ Տյուլայան Միքայել ամիրային։ Կարճ ժամանակամիջոցում պատանի Կարապետը այնքան է հմտանում ոսկերչություն արվեստում, որ նրա համբավը տարածվում է ամբողջ քաղաքում, իսկ ժամանակակիցը հիացմունքով գրում է նրա մասին. «Ի Կոստանդնուպոլիս մի ոք կամ ոչ ոք նման նմա գտանք»¹։ Միքայել ամիրան մտածում է նրան դարձնել գործընկեր և անգամ ամուսնացնել իր դուստր հետ։ Տասնութամյա պատանուն սպասում էր արքունի ոսկերիչ դառնալու հրապարակ հեռանկարը։ Սակայն հակառակ հոր ցանկությանը և Տյուլայան ամիրայի ակնկալություններին, Չամչյանը, հրաժարվելով աշխարհիկ կյանքից, մտնում է Վենետիկի Մխիթարյան վանքը։ Չամչյանի կաթոլիկ կենսագիրը պատանու այդ քայլը բացատրում է նրանով, որ նա եվառնալ էր լավ տիրապետում փոյթ փրկության հոգություն²։ Սակայն դա համոզիչ չի հնչում։ Եձեզու փրկության համար կարիք չկար այդքան հեռու գնալու։ Նրան ս. Ղազար էր տանում կղզյակի ուսումնասիր վիճակագրի ու սովորելու անհագ տենչը։ Չամչյանի կյանքի այս փուլից հետո կարևոր դեր են կատարել Կ. Պոլսում գործող Մխիթարյան վարդապետներ Միքայել Սեբաստացին և Մկրտիչ Անանյանը, որոնց վրա մեծ տպավորություն էին թողել պատանու արտակարգ ընդունակություններն ու բռնուն հետաքրքրասիրությունը հայոց պատմության, լեզվի և մշակույթի ներկատմամբ։ Ուսումնասիրել պատանին նրանց օժանդակությունը խնդրեց միջնորդելու Ստ. Մել-

¹ «Մխիթար», բացառիկ պատկերազարդ թերթ, Վենետիկ, 1901, էջ 218։

² Բարձրավելագ, 1981, № 3-4, էջ 301։

³ Մ. Մաղաք-Քեֆի ի լ յ ա ն ց, Կենսագրություն Երեմյան արանց, հ. Ա, Վենետիկ, 1839, էջ 811։

րոնյան արբանյակը առջև՝ իրեն ս։ Ղազարի վարժարանն ընդունելու համար։ Եվ քանի որ այդ ժամանակ արդեն ավարտվել էր վարժարանի ընդունելությունը, ուստի Միքայել Սեբաստացին Չամչյանի վերաբերյալ հանձնարարական նամակներ է ուղարկում արբանյակը՝ խնդրելով բացառության կարգով ընդառաջել նրան։ Պատանու հետ ունեցած իր զրույցներից մեկի անմիջական տպավորության ներքո Միքայել Սեբաստացին Ստ. Մելքոնյանին հղած նամակում այսպես է բնութագրում նրան. «պատանին է զուարթամիտ, հոգեւէր, շերմեռանդ և ձեռաց արհեստի դարձանալիս, իսկ ավելի ուշ գրած իր մեկ այլ նամակում կանխատեսում է, թե «այս պատանեակս յատուկ նշանաւոր ոմն երեւի»⁴։ 1757 թ. մարտի 27-ին, զույգ վարդապետների հանձնարարական-երաշխավորագրով, Չամչյանը ուղևորվում է Վենետիկ՝ ս. Ղազար, նույն թվականի սեպտեմբերին նա ընդունվում է տեղի Մխիթարյան վարժարանը և, իր արտակարգ ընդունակությունների ու մեծ աշխատասիրության շնորհիվ, շուտով դառնում դպրոցի՝ առաջին աշակերտը։ Վարժարանում ուսուցանվող առարկաները, դրանց ծրագրերը և ուսուցման դրվածքը հստակ պատկերացում են տալիս Մխիթարյան դպրոցի հետապնդած նպատակների մասին։ Թե՛ ինչ առարկաներ է ուսանել Չամչյանը վարժարանում, երևում է ժամանակակիցի հետևյալ վկայություններից. «Ե՛ս սկսանիլ մանկանց զուսումն՝ նախ մարզէր (դպրոցը—Ա. Ու.) զնոսա ի քա՛ղ վերածնունթին գրոց, և յաւելտ հայկազուն հեղինակաց. և ապա կարդա, ուսուցանէր նոցա զբնութականութիւն, զպատմութիւն, զաշխարհագրութիւն, զուսումնականութիւն, զճարտասանութիւն, զբանաստեղծութիւն, զփիլիսոփայութիւն, զաստվածաբանութիւն և զբարոյական»⁵։ Վարժարանում բարձր հիմքերի վրա է դրված եղել ընդհանրապես «ուսումն լեզուաց» և առանձնապես հայոց լեզվի դասավանդումը։ Չամչյանի հայերենի ուսուցիչն էր Վրթանես վարդապետ Ասկերյանը, որն իր աշակերտի մեջ ոչ միայն սեր ներարկեց մայրենի լեզվի նկատմամբ, այլև խրատական նրա քերականագիտական հետաքրքրություններն ու հետազոտման մեծապես օգնեց։ Հայոց լեզվի բերականական կանոնները սահմանելիս Ասկերյանի հսկողության ներքո ապագա պատմագիրը մեծ ջանասիրությամբ ուսումնասիրում է հայերենն ու նրան նվիրված հետազոտությունները և անքան է հմտանում գրաբարում, որ նրա նամակներից մեկի ընթերցողը, ոգարմացնալ ընդ իրթինութիւն նորա, ասէ թե զայս դիր գրեալ է նարեկացին, կամ այլոք ի նախնի հարց հայոց»⁶։ Ուսումնառության տարիներին (1757—1762) Չամչյանը աշակերտում է նաև վարժարանի տեսուչ Կարապետ վարդապետ Մարտիրոսյանին, որը հետևում է իր սանի պատմագիտական, փիլիսոփայական և աստվածաբանական պարապմունքներին։ Տեսնելով, թե նա ինչպիսի հեշտությամբ է ընկալում և սովորում օտար լեզուներ, Կարապետ վարդապետը նրան սասնակից է դարձնում իր աշխատասիրած լատիներեն-հայերեն մեծ բառարանին։ Փայլուն արդյունքներով հայերենին, նա հետազոտում սովորում է նաև հին ու նոր հունարեն, իտալերեն, ֆրանսերեն։ Արևելյան լեզուներից տիրապետում էր թուրքերենին, երբայցեքերենին, մասամբ նաև պարսկերենին։ Չամչյանի մտավոր զարգացման վրա հատկապես ազդել է նրա ավագ եղբայր, Մխիթարյան միաբանության անդամ Հակոբոս Չամչյանը։ Ժամանակակիցների վկայությամբ սա հմուտ էր մաթեմատիկական, փիլիսոփայական և աստվածաբանական գիտությունների մեջ։ Նա կրտսեր եղբոր մեջ սեր արթնացրեց դեպի հայոց պատմական անցյալն ու հայ հին գրականությունը, ճիշտ ուղու վրա դրեց նրա բացառիկ ընդունակությունները և խրախուսեց նրա առաջին պրպտումներն ու քայլերը հայագիտության բնագավառում։ 1759 թ. Չամչյանը ընդունում է Մխիթարյան կրոնավորական ուխտը՝ վերցնելով Միքայել (ի պատիվ Միքայել Սեբաստացու) անունը։

Ավարտելով Մխիթարյան դպրոցը, 1762 թ. մարտի 6-ին Չամչյանը ձեռնադրվում է քահանա և նշանակվում վանքի վարժարանի ուսուցիչ։ Հենց այդ ժամանակից էլ նա սկսում է պարապել միաբանության նոր կազմակերպվող մատենադարանում, ուսումնասիրում հայ և օտար մատենագիրների ձեռագիր ու տպագիր դրսերը, հրապարակի վրա եղած հետազոտությունները։ Եանդուություն իր ժողովրդի հոգևոր մշակույթի գանձերին։ Նրա մեջ առաջացնում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը գրելու գաղափարը։ Իրեն հատուկ ոգևորությամբ Չամչյանը

⁴ «Բազմավեպ», 1981, № 3—4, էջ 301։

⁵ Ավագ երյան, Համառոտ նկարագիր Մխիթարեան միաբանության ի վենետիկ ի կըղզին սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1819, էջ 50—51։

⁶ «Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 76։

⁷ Ղ. Տալան, Մայր դիվան Մխիթարեանց Վենետիկ ի ս. Ղազար (1707—1772), Վենետիկ, 1930, էջ 264։

նը սկսում է ատաղձներ կուտակել ապագա երկասիրության համար⁸։ Սակայն մեծ թափով սկսված նրա աշխատանքներն ընդհատվում են. արքա՝ Ստ. Մելքոնյանը 1769 թ. ապրիլի 16-ին նրան շնորհում է վարդապետական գավազան, ապա հանձնում նաև շրշիկ քարոզիչ միսիոներին և Բասրայի հայ կաթոլիկ համայնքի հոգևոր առաջնորդի՝ պաշտոնը։ Այս բնագավառում ի հայտ է դալիս Զամյանի բնատուր մի գիծ ևս՝ հոետորական ձերբը։ Թերևս շափազանցություն չէ նրա կաթոլիկ կենսագիրների հաղորդած այն տեղեկությունը, որ երիտասարդ քարոզչի համարվել տարածվել էր ամբողջ Արարիայում։ Իր նամակներից մեկում Զամյանը ես գրում է, որ լսելով իր համարվել Երրադի պարսիկ իշխանավորներն էլ են ցանկացել ունկոնդրել իրեն⁹։ Զամյանը քարոզչության հրավեր է ստանում անդամ հեռավոր Թիֆլիսից 1772 թ. փետրվարի 8-ին Ստ. Մելքոնյանին դրած Զամյանի նամակից տեղեկանում ենք, որ նրա կովկասահայ կարգակիցներից ոմանք առաջարկել են նրան անցնել Թիֆլիս և ստանձնել տեղի կաթոլիկ համայնքի հովվի պաշտոնը¹⁰։

Իբրև քարոզիչ Զամյանը հնարավորություն է ունեցել ազատորեն ճանապարհորդելու և ծանոթանալու Ալեքսանդրիա, Բեյրութ, Դամասկոս, Հալեպ, Բաղդադ, Բասրա և այլ քաղաքներում գտնվող հայ գաղթավայրերին։ Զամյանը չի բավարարվել միայն հոգևոր առաջնորդի գործունեությամբ. նրա կողմը հնարավորություն էր տալիս ոչ միայն մոտիկից ծանոթանալու իր ժողովրդի վարք ու բարքին, հոգսերին, այլև նրա հոգևոր գանձերին։ Երիտասարդ քարոզիչը մեծ զոհողությունների գնով կարողանում է մի քանի հազվագյուտ գրչագիր մատյաններ հավաքել և ուղարկել ս. Ղազարի¹¹։ Նա հետամուտ էր այստեղ հայերեն ձեռագրերի մի ճոխ հավաքածու ստեղծելուն, որը միայն հնարավորություն կընձեռներ հայագիտական լայն կտավի երկասիրությունների ձեռնարկմանը։ Այդ նպատակով Զամյանը սկսում է տեղեկություններ հավաքել զանազան վանքերում ցրված ձեռագրերի վերաբերյալ։ Քաջում ականատես պատմեն, թե թաղում ձեռագիրք են ի վանս, որ ի լեռն Պշնոյ (Բջնի—Ա. Ու.), յերկրին Երեսնոյ, եւ ի լերին Աղբատոյ, եւ յայլ եւս տեղիս¹²։ 1770 թ. հոկտեմբերի 1-ին Ստ. Մելքոնյանին գրած նամակում նա հաղորդում է. «Ստուգի տեղեկացայ աստ ի բազմաց, թէ ի գաւառն Վան բաղում եւ անհամար ձեռագիրք Հայոց գտանին ի վանորայս։ Բայց ոչ տան, ասեն, զայն ումեք, եւ մեզ չէ հնար զնոսին ի ձեռս մեր բերել»։ Ուստի նա առաջարկում էր ձեռներեց միաբաններ ուղարկել Հայաստանի վանքերը՝ տեղերում դրանց ընդօրինակության գործը կազմակերպելու համար։ «Կարծես թէ արդիւնաւոր լինէր զմին կամ զերկուսն ի սփռելեաց ի կողմանս Հայաստանայ առաքել թկտիլ, ուր եթէ այլ ինչ եւս ոչ շահեսցին»՝ ձեռագիր գրեանս գտցեն պիտանիս¹³։ Հասկանալիորեն Զամյանին նախ և առաջ հետաքրքրում էին պատմագիտական բնույթի ձեռագրերը և հատկապես «Հայոց պատմություն»-ները։ Իմանալով, որ Նոր Զուղայում առկա են նման ձեռագրեր՝ նա անմիջապես ս. Ամենափրկիչ վանքի վանահայր Մկրտիչ վարդապետին է դիմում հետևյալ թախանձագին խնդրանքով. «Լուայ ես աստ, թէ գտանին ի ճուղայ ճեռագիր Պատմագիրք Հայոց, բազում յարգանք աղաչեմ զսրբութիւն Զեր առնել մեզ զշնորհայս մեծ, որոնել ի վանորայս կամ յայլ տեղիս, եւ գտեալ զայն առաքել առ մեզ, եւ որչափ ինչ արժանի գին խնդրի պատրաստ եմք վճարել, Իսկ եթէ որք ունին՝ ոչ կամիցին վաճառել, Եթէ հնար է՝ տալիք անսխալ օրինակել զայնս եւ զվարձս գրագրին՝ գրեսցիք առ մեզ»¹⁴։ Զամյանը հետագայում ևս, լինելով Կ. Պոլսում, Պաշպալովում (Եղիսարեթուպոլիս), թե այլուր, նախ և առաջ հետաքրքրվում էր հայերեն ձեռագրերով, հնարավորության դեպքում գնում էր դրանք և ուղարկում ս. Ղազար, այդպիսի հնարավորության բացակայության դեպքում կազմակերպում էր ձեռագրի ընդօրինակումը կամ հորդորում էր տիրոջը՝ այն նվիրել վանքի մատենադարանին։ Այս տեսակետից հատկանշական է Բաղդասար Ղլիճենց (Սեպեյան) Եվդոկացու հիշատակարանը, որ նա խոսել է Մարտիրոս Օպիավացու ժամանակագրության՝ Ներսես Պալիանենցի կատարած հայերեն թարգմանության ինքնադրի կազմի վրա. «Այս գիրքս պատմութեանց»

⁸ Մ. Ճ ա ն ա շ յ ա ն, Պատմություն արդի հայ գրականության, հ. Ա, Վենետիկ, 1953, լ. 2 36։

⁹ Ղ. Տ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 354։

¹⁰ Նույն տեղում, էջ 277։

¹¹ Նույն տեղում, էջ 263—264։

¹² Քաղաքական, 1981, № 3—4, էջ 311։

¹³ Նույն տեղում, էջ 313։

¹⁴ Նույն տեղում, էջ 309—310։

ըստ խնդրոյ Վ. Տ. Միքայելիին Չամչեանց Լտու յիշատակ ի վանս Հայոց, որ ի Վենետիկ¹⁵։
 Բայսրայում գտնվելու տարիներին Չամչեանը նաև սկսում է նյութեր հավաքել իր ապագա
 երկասիրութիւնների և, մասնավորապես, «Հայոց պատմութեան» համար։ Դրա ապացույց կա-
 թող է ծառայել այն, որ նրա խնդրանքով Մխիթարյան միաբանութեան անդամներ Գրիգոր Քար-
 դապետն ու Պետրոս վարդապետ Զուղայեցին ձեռագրերից արտագրել և նրան ևն ուղարկել
 Քաղկեդոնի, Կարինի, Շիրակավանի, Տարսնի, Ասի, Ադանայի Եկեղեցական ժողովներին վե-
 րաբերող մատենագրական նյութերը¹⁶։ Արքահոգեւոր գրած նրա 1770 թ. մայիսի 11-ի նամակից
 պարզվում է, որ Չամչեանը դիմել է նոր Զուղայի հայոց առաջնորդ Մկրտիչ վարդապետին,
 որպէսզի նա սղանալ ի ձեռնադր զձեռագիր պատմագիրս առաքեսցէ այսր. րանդի րազում պատ-
 մազիրը գտարին անդ¹⁷։ Դժվար չէ կոհակել, որ Եկեղեցական ժողովներին վերաբերող մատե-
 նագրական նյութերն ու հայոց պատմագիրների Երկասիրութիւնները նրան անհրաժեշտ էին ոչ
 թէ իր քարոզչական դործունեութեան, այլ պատմագրական ձեռնարկումների համար։ Հենց
 դրանով պետք է բացատրել նրա բուռն հետաքրքրութիւնը ձեռագիր «Պատմութիւն Հայոց»-նե-
 րի նկատմամբ։ 1770 թ. փետրվարի 25-ին Մկրտիչ վարդապետին գրած նրա նամակից տեղե-
 կանում ենք, որ հայոց պատմագիրների Երկասիրութիւնները նրան անհրաժեշտ էին համապա-
 տում «Պարմութիւն Հայոցի» ստեղծման համար. «հարկ եղեւ մեզ որոնել զձեռագիրս Պատմու-
 թեան Հայոց, առ ի կարգեալ զայն ըստ պատշաճի, եւ ի յոյս ընծայել ազգիս մերոյ արժանա-
 պատում պատմագիրք մի¹⁸։ Այստեղից դժվար չէ կոհակել, որ արդեն Բասրայում Չամչեանը
 նախաքայլեր էր ձեռնարկում, իր բառերով ասած՝ «Գիրք պատմութեանց Հայոցի» շարադրման
 ուղղությամբ։

1771—1773 թվականներին Արարիայում տարածված ահավոր ժանտախտը և տեղի ան-
 բարենպաստ կլիմայական պայմանները քայքայում են Լոանդուն քարոզչի առողջութիւնը՝
 պատճառելով սարսափելի զխացավ, որը նրան ուղեկցում է ամբողջ կյանքում. «Ընդ տօթոն
 և խժային գիշերիս»,— գրում է Մ. Չամչեանը 1771 թ. օգոստոսի 10-ին,— անտանելի և տաժ-
 կուն ծիւցիւն Կիւսիսի և Թուրքիայի անգորանալի, որով այնչափ նուաղեալ եմ, մինչ գրեթէ ոչ գի-
 տեմ ուր եմ, և զինչ գրեմ, և զիարք գրեմ...¹⁹։ Այս պայմաններում նա գրում է իր առաջին
 Երկասիրութիւնը՝ «Վահան ուղղափառութեան» խորագրով։ Դա քառահատոր, հոկայածավալ
 (յուրաքանչյուր հատորը շուրջ 800—900 էջ) դավանաբանական վիճարանութիւն էր²⁰։ Պու-
 սի պատրիարք Հակոբ Նալլանի «Գիրք կոչեցեալ Վէմ հաւատոյ» (Կ. Պոլիս, 1733) և «Եւրագ
 ճշմարտութեան» (Կ. Պոլիս, 1756) երկասիրութիւնների գեմ։ Այդ գրքերը լայն տարածում էին
 գտել և մեծ հռչակ բերել դրանց հեղինակին։ Ինչպես գործնական, այնպես էլ տեսական գոր-
 ծունեութեամբ Հ. Նալլանը պայքարում էր կաթոլիկութեան գաղափարաբանութեան գեմ, փորձում
 էր դիմագրավել Վատիկանի պրոպագանդիստների՝ «հոգու այդ արսորդներին ազդեցութեանը»։
 Ահա այդ հմուտ աստվածաբանի և ազգային եկեղեցու շահերն արտահայտող կրօնավորի գեմ էր
 դավանաբանական ու գաղափարական պայքարի սլաքն ուղղում Մ. Չամչեանի իր աստվածաբա-
 նական Երախայրիքով։ Ինչպես ջանում են ապացուցել Չամչեանի կաթոլիկ կենսագիրները, նա
 օաստվածաբանական գորավոր փաստերով և պատճառաբանութեամբ սրբագրել ու հերքել է
 Հ. Նալլանի «անհիշտ ճրութիւնները» և համազօր փաստերով ցույց տվել «հայ եկեղեցվո յուղ-
 դափառ վարդապետութիւնը»²¹։ Շուտով Չամչեանի այդ աշխատութիւնը նրա «հակառակորդ-
 ները կը գողանան սենյակեն, բայց ասով փոխանակ վնասելու իրեն»՝ ընդհակառակը կը նը-
 պաստեն անոր ծավալումին²²։ Սակայն հակառակ այս պնդմանը, ինչպես Չամչեանի, այնպես
 էլ նրա կարգակիցների համար խիստ անսպասելիորեն, պայսական հավատաքննութեան քարձ-
 րագուն թաղանթ սկսում է կասկածել իր շերմեռանդ միջոցների անկեղծութեանը և կարգադրում
 նրան անմիջապես ներկայանալ Հոռոմ՝ հարցաքննութեան։ Չամչեանի կենսագիրները դա բա-
 ցատրում են նրանով, որ նա թաքստանվել էր իբր ժանտախտի տարիներին իր հոտն ան-

15 Մաշտոցի անվան Մատենադարան, մանրածապակեն № 1011։

16 Ղ. Տ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 269—270, հմմտ. էջ 278—279։

17 Նույն տեղում, էջ 264։

18 «Բաղմավեպ», 1981, № 3—4, էջ 309։

19 Ղ. Տ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 268, հմմտ. նաև էջ 352—353։

20 Մ. Մ ա ղ ա թ-Թ ե ո փ ի լ յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 811, տե՛ս նաև Մ. Ժ ա ն ա շ յ ա ն, նշվ. աշխ., էջ 37։

21 Մ. Ժ ա ն ա շ յ ա ն, նշվ. աշխ., էջ 37։

խնամ թորեն ելու համար, բայց Հոռմը չլուաւ և յալլոց քճշմարտութիւն իրացն, վասն որոյ չի գուր լեղն ամենայն ամբաստանութիւնքն²²։ Ավելի հավանական են հնչում Զամյանի հակա-
ռակորդներին՝ հայ լատինամիտներին մեղադրանքները նրա հասցեն, որ քարոզչութիւն տարի-
նէրին նա յաղթամիջի հերձվածող (իմա՝ լուսավորչական) քարեկամներ ստացաւ իր քաղա-
րականության շնորհիվ²³։ Սա բացահայտ ակնարկ է այն մասին, որ Զամյանը, լանսալով վա-
տիկանի պաշտոնական ուղերձները, հոգեւոր հաղորդակցութիւն մեջ էր մտել լուսավորչական-
ներին հետ և, ըստ երևույթին, այնքան էլ եռանդով չէր դատափետել լուսավորչական-հերետի-
կոսներին։ Անշուշտ, կաթոլիկ եկեղեցու շահակրի դերը ստանձնած Զամյանի այս քաղաքա-
կանութիւնն էր նրա նկատմամբ անբավականություն ստեղծում Հոռմի պաշտոնական շրջա-
նակներում։ Դրա ապացույց կարող է ծառայել այն, որ հավատաքննութիւնն սպասաւորները
նրան արգելում են զբաղվել քարոզչութեամբ և պահանջում են հետ վերադառնալ։

1775 թ. ոկդրներին Զամյանը նորից ս. Ղազարում էր։ Այստեղ նրան հանձնվում է կղե-
րանոցի նորոնծայարանի²⁴ աշակերտների դաստիարակի պաշտոնը (1775—1789)։ Միութեան
վարժարանում Զամյանին աշակերտում են Մկրտիչ և Հարութիւն Ավգերյան եղբայրները, Ղու-
կաս Ինճիկյանը, Մանվել Զախախյանը և շատ ուրիշներ, որոնք անուրանալի ավանդ ձեռքըն-
ցին հայագիտության դարգացման ու գրական-թարգմանական գործունեության ոլորտներում։
Արըր դեպի մայրենի լեզուն, նրա գիրն ու գրականութիւնը, մշակույթն ու պատմութիւնը նրանք
ժառանգեցին իրենց համբավաւոր ուսուցչապետից, որն աչք ժամանակ հրապարակ էր քննեցում
իր գիտական պրպտումների նախընթացը չունեցող արդյունքները։ Զամյանի կյանքի վեհե-
տիկյան այս երկրորդ շրջանը գիտական-ստեղծագործական արդյունքների առումով ամփոփ-
վում է հայոց լեզվին ու հայոց պատմութիւնը նվիրված երկու կոթողային աշխատութիւննե-
րում։ 1779 թ. լույս է տեսնում նրա քերականութիւնն զասագիրքը²⁵, որը գրեթե մի ամբողջ
հարյուրամյակ ճանաչվել է գրաբարի լավագույն քերականութիւնն և գործածվել որպէս հայե-
րենի դասագիրք թե՛ արեւմտահայ, և թե՛ արեւելահայ դպրոցներում։ Ինչպէս նշում է Զամյանը,
Նախորդ բոլոր քերականութիւնները, լինելով անկատար ու թերի, չեն կարողացել ներկայաց-
նել հայերենի իսկական վիճակը, բանի որ կաղապարվել են լատիններենի վրա՝ օգտագործելով

²² Մ. Մ ա ղ ա թ Թ ե ո փ ի լ յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 812, հմմտ. Նաև Լ ե ո, Հայոց պատ-
մութիւն, հ. Գ, Երևան, 1946, էջ 1013։

²³ ՕԱրշալույս Արարատյան, 1859, № 432-ի հավելվածը։

²⁴ Վանք մտնել ցանկացողները, նախքան միաբանութիւնն անդամ դառնալը, այսինքն մին-
չև կրոնական կարգ ստանալը, տեղափոխվում էին այստեղ և որևէ վարդապետի ձեռքի տակ
պատրաստվում կրոնական կյանքին՝ ստանալով աստվածաբանական ու հայագիտական կրթու-
թիւն։

²⁵ Մ ի ք ա յ ե լ Զ ա մ չ ե ա ն, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վեհետիկ, 1779։ Նը-
կատի ունենալով հայոց լեզվի ուսումնառութիւնն հարաճուն կարիքները՝ Զամյանը քերակա-
նութիւնն սույն ձեռնարկը հետագայում համառոտում և որպէս դպրոցական դասագիրք տրամադ-
րում է ազգային դպրոցներին՝ Քերականութիւն Հայկազեան լեզուի։ Յօրինեալ ի Հ. Մ. վ.
Զամչեանց եւ այժմ նորոգ համառոտեալ աշխատասիրութեամբ նորին առ ի դիւրութիւն ուսա-
նորացն վերտառութեամբ (Վեհետիկ, ս. Ղազար, 1801)։ Այս տպագրութիւնից է, որ կատարվել
են Զամչեանի քերականութիւնն հետագա բոլոր տառնմանկ վերահրատարակութիւնները՝ Կալիկա-
թա, 1823, Թիֆլիս, 1826 (նույն տարում և նույն վայրում երկու հրատարակութեամբ), Կալի-
կաթա, 1830, Վեհետիկ, 1831, Շուշի, 1833, Վեհետիկ, 1843, Մոսկվա, 1859, Շուշի, 1859 և
Վեհետիկ, 1859։ Ի դեպ, ե. Տեր-Հովհաննիսյան Ծամշաղինեցու անունով լույս տեսած Շամառոտ
Հայկազեան քերականութիւնը (Շուշի, 1839) ևս Զամչեանի այս աշխատութիւնն պարզ համա-
ռոտութիւնն է, որի մասին Տեր-Հովհաննիսյանը գրքի առաջաբանում հավաստում է. Շամառո.
տեցի ըստ չափու կարեաց՝ զպանծալի քերականութիւն գերիմաստ Միքայէլ արհիեպիսկոպո-
սին Կոստանդնուպոլսեցոյ (այսինքն՝ Մ. Զամչեանի—Ա. Ու.) ի դիւրեմկալ վարժութիւն հայ-
կազան մանկանց...։

Գարբիել Պատկանյանցի այն կարծիքը, թե իբր Զամչեանը թժայր ի ծայր յուրացուցեալ
և Պաղտատար Գալիի «սակավարեպ» քերականութիւնը (Գ. Պ ա տ կ ա ն յ ա ն ց, Ասղիաքաղ,
ի լիակատար կենսագրութիւնն սրբազան հայրապետի Ներսիսի Ե. վեհափառ և ազգասեր կա-
թողիկոսի Ամենայն Հայոց, Զմյուռնիա, 1876, էջ 11), հիմնադրուկ էլ քանի որ համեմատու-
թիւնները չեն խոսում դրա օգտին։

նրան բերականությունը, խոնարհումները, հոյակապությունը, մասնավորապես, բառերը՝ Այդ կոպակցությունը նա՝ դրում է. «Յայն՝ ժամանակի՝ նորոգ հանդիսացեալ էին՝ բազում քերականութիւնք բուզում՝ հեղինակաց, որք՝ քաղում շին ի լեզու Վերա26»։ Իր բերականությամբ Չամչյանը դուրս էր գալիս թե՛ իրեն նախորդող հեղինակների անկատար ու անհանգիստ, սակայն Հոռոմի կողմից խրախուսվող, բերականական փորձերի, ե թե՛ Վատիկանի պաշտպանած այն տեսակետի դեմ, թե՛ Նիկիայի Հոռոմի և Վարդան Հունանյանի շի հետևում՝ «կատարյալ ուղղափառ չէ, բով կաթոլիկ չէ, փրկության՝ ճամբեն՝ դուրս է27»։ Չամչյանը մերժում է անգամ Մխիթար Արքայի բերականության դասագիրքը, որովհետև այն՝ «ոչ էի հնար հակառակ նոցին (լատինաբաններին— Ա. Ա.) աւանդել կանոնս ըստ բուն նախնի ուղղախօսութեան» և չհամարձակվելով՝ ուղղել Հակոբ Հոռոմի ու Վարդան Հունանյանի աղճատ գրաբարը, ստիպված էր սյարմարել զճառս բերականութեան՝ ի հոյակապութեան ի լծորդութիւնս և ի համաձայնութիւնս մասանց բանի28, Մխիթար Սեբաստացու բերականական ժառանգությունը վերանայելով և ուղղելով Չամչյանը միա՝ «ամանակ շատ լավ էր պատկերացնում դրա՝ հնարավոր բոլոր հետևանքները։ Նա նաև լազրիտը, որ Սեբաստացին, ըստ էության, դեմ էր՝ լատինաբանների աղքատ, գուհիկ ու աղճատ-ված հայերենին, սակայն, գիտակցաբար, իր կամքին հակառակ ստիպված էր ընդօրինակել նրանց, բանի՝ որ Հոռոմի դիտական շրջաններում գոյություն ունեւր այն կարծիքը, թե իրր սմա-քուր գրաբարը հերձվածողություն է առաջնորդում29, Այստեղից պարզ է դառնում, թե ինչու Սեբաստացին իր մերձավորագույն աշակերտներին վախճաւած պատգամում էր՝ «այսպէս գիտությունը և կամով զեշ լեզվին հետեւել, որ իրր հերձվածող շատապարտվեն Հոռոմեն, չբը-վեն Խտախալեն30, Չամչյանին հայտնի էր Սեբաստացու այդ մտավախությունը, հայտնի էր նաև Հոռոմի դիրքորոշումը՝ այդ հարցում, սակայն առանց վարանելու նա ձեռնամուխ եղավ լատինաբանությամբ խնդրված հայոց լեզուն մաքրելու և՛ նրա նախնիին վիճակը վերականգնելու նվիրական աշխատանքներին։ «Կամեցաք զայս բերականութիւն, — դրում է նա, — ի լոյս ընծայել, յօրինեալ ամենեւին լսած՝ հանգամանաց ոճոյ լեզուին մերոյ. հուզեալ այլաբանութեամբ ի դրութիւնս նախնեաց մերեց. դուզութիւն խօսից՝ թէ ըստ հոյակապ անուանց, և՛ թէ ըստ խնդրառութեան մասանց բանի. յամենայնի ջանալով ի նոցունց բերել զօրինակ կանոնաց աւանդելոց ի սմին»31, Այսպիսով, Չամչյանի բերականությունը վերջնական և ուժգին հարված հաս-ցրելը լատինաբանությամբ, Իբրև նրա տեսական հերքումն ու քաջառումը Չամչյանը դիտա-կան համարձակությամբ դեմ էլավ նաև բերականության մեջ տրամաբանական-ազդեցիկա-տական ուղղությունը, մերժեց նրա արատաւոր մեթոդները և մեր նախնիների ոսկեզինիկ լե-զուն մաքրեց օտարաբանություններից և արհեստական կառույցներից, ձիւտ է, նրա բերակա-նությունն ունի խոցելի կողմեր և վիճելի հարցադրումներ ևս, օրինակ, հայերենում տասը հո-ւովների գործածության խնդիրը և այլն, սակայն, ինչպէս իրավացիորեն նշում է ակադ. է. Ա-ղաջանը, Չամչյանի բերականությունը «իր ժամանակի համար իրոք որ կատարյալ կարելի է նամարել»32:

26 Մ. Չամչյան, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, Առաջարան:

27 Գ. Այվազովսկի, Ուրուագիծ ողտոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան վե-նետիոյ, Փարիզ, 1857, էջ 35:

28 Մ. Չամչյան, Քերականութիւն, Առաջարան:

29 Ա. Զամիսյան, Հայոց եկեղեցու պատմություն, Նոր Նախիջևան, 1909, էջ 108, հմտ. նաև Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, պրակ Ա, Վաղարշա-պատ, 1906, էջ 58:

30 Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., էջ 37:

31 Մ. Չամչյան, նշվ. աշխ., Առաջարան: Հայոց լեզվի ուսուցումը դպրոցներում ավելի բարձր հիմքերի վրա դնելու նպատակով, Չամչյանը կյանքի վերջին տարիներին սկսում է աշ-խատել բերականության նոր դասագրքի վրա, որը պետք է լիներ ավելի պարզ ու դյուրամա-տչելի ձևով: Սակայն վերահաս մահը խանգարում է նրա այդ ծրագիրը, որի մասին է. Հյուր-մյուզյանի «Դուռն բերականութեան հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1833) դասագրքի առա-ջարանում կարգում ենք. «Հ. Մխիթար վ. Չամչյան, որ մեր ազգի մէջը առաջին կարգավորեալ բերականութիւն ջինողը եղաւ, գիտնալով ասոր հարկաւոր ըլլալն ալ՝ սկսաւ համառօտիկ բե-րականութիւն մը շինելու, բայց չիկրցաւ լրմնեցնել, մահը վրայ հասնելով»:

32 Է. Բ. Աղաջան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 234: Հայոց լեզվի բերականության զարգացման գործում Չամչյանի կատարած դերի մասին ընդար-ձակորեն տե՛ս Մխիթարյան, Միջայել Չամչյանի գեղը հայոց լեզվի շարահյուսության

Քրիստոնեության հրամարտությունից մեկ տարի էլ չէր անցել, իսկ Զամյանը, արբահայր Ստ. Մելքոնյանի հանձնարարությամբ, արդեն ձեռնամուկ էր հղել մեծածավալ երկասիրության՝ «Պատմություն Հայոցի» շարադրման աշխատանքներին։ 1784 թ. սկզբներին այն գրվել պատրաստ էր տպագրության, որի մասին Ստ. Մելքոնյանը 1784 թ. հունվարի 24-ին գրում է. «Պատմագիրք շարադրելու ի. շ. Միջակալին գրեթե հաջող է եղել յետ բազմաց սկսանի տպագրություն նորա»³³։ Զամյանի նախնական ծրագրի համաձայն, Պատմությունը պետք է ունենար երկու հատոր, յուրաքանչյուրը հարյուր մամուլ ծավալով։ Այդ մասին իմանում ենք 1785 թ. մարտին Կ. Պոլսի Մխիթարյանների ուղղված արբահոր նամակից. «Սկսաք զտպագրություն Պատմությանց գրքուն Հայոց ազգին, շարադրելու նորոգ, որ լինի երկու հատորով, շուրջ երկու հարիւր տպագրալով (մամուլով—Ա. Ու.)»։ յուսամյ թէ ընդունելի լիցի ազգին»³⁴։ Սակայն տպագրության ընթացքում հեղինակի կատարած հավելումների և նորամուծությունների հետևանքով (որոնք շարունակվեցին մինչև տպագրության վերջին օրը), զրբի ծավալն ընդարձակվելով հասավ 360 մամուլի, որը նախատեսված երկու հատորի փոխարեն ամփոփվեց երեք հատորների մեջ։ Ստ. Մելքոնյանի նամակն օգնում է պարզելու նաև մի այլ կարևոր իրողություն։ Ինչպես ակնհայտ է նամակից, Ա հատորի տպագրությունը սկսվել է 1785 թ. մարտին, մինչդեռ հրատարակված Պատմության առաջին հատորի տիտղոսաթերթին դրոշմված է այլ թվական՝ 1784 թ.։ Այսօր, շնորհիվ Ս. Ճևեհանյանի՝ ս. Ղազարի դեմքով նամակառած մանրակրկիտ պրպտումների, պարզվել է, որ «Պատմություն Հայոցի» հատորների տպագրվել են ոչ թե 1784—1786 թթ., ինչպես վկայում են տպագրված հատորների տարեթվերը, այլ 1785—1788 թթ.³⁵։ Հատորների հրատարակության ձգձգումը հետևանք էր ոչ միայն տպագրական դժվարությունների, հմուտ գրաշարների բացակայության³⁶, այլև հեղինակի հաճախակի միջամտությունների, էրա ծայրաստիճան բծախնդրության։ Ծանկանալով կատարյալ տեսնել իր երկասիրությունը՝ Զամյանն անընդհատ փոփոխություններ էր կատարում տպագրված ազգորինակաների վրա, երբեմն գրեթե հիմնովին վերափոխելով դրանք։ Հատկապես մեծ թիվ էին կազմում հավելումները, որոնք հետևանք էին նոր հայտնաբերված կամ ստացված ձևազարկերի, հիշատակարանների, գավազանագրքերի և արքայացանկերի։ Քանի որ. «Ղազարի մատենագրաբանը լուսնի անհրաժեշտ բոլոր սկզբնաղբյուրները, Զամյանը 1782—85 թթ. ընթացքում տասնյակ նամակներ է գրում Հնդկաստան, Նոր Զուղա, Ռասրա, Բաղդադ, Կ. Պոլսի և այլուր գտնվող ծանոթներին, միաբանության բարեկամներին՝ իր հետապնդած այս կամ այն նյութը ձեռք բերելու համար։ Դրանք ստանալու համար նա երբեմն ստիպված է եղել սպասել տարիներ։ Հասկանալի է, միշտ չէ, որ նա ստանում էր ակնկալած աղբյուրը կամ նյութը, իսկ այն տասնհինգ հայ մատենագիրների երկերը (Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի, Ղևոնդ, Շապուհ Բագրատունի, Թովմա Արծրունի, Մխիթար Անեցի, Վանական վարդապետ և այլք), որոնց մասին գրում է. թե զգուս ոչ ունեմք առ մեզ», այնպես էլ նրան վիճակված չէր տեսնելու և օգտագործելու Զամյանը լավ էր հասկանում, որ առանց այդ մատենագիրների երկերի օգտագործման իր Պատմությունը դառնում է թերի և անկատար, ուստի համառոտեց շարունակում էր դրանց որոնումները և դրանով իսկ հետաձգում աշխատանքի վերջնական ավարտը։ Իր ձևափոխված գործի նկատմամբ Զամյանի նման պատասխանատվություն ու բծախնդրություն երբեմն տեղիք էր տալիս բացահայտ դժգոհությունների։ Այսպես, Ստ. Մելքոնյանին ուղղված 1785 թ. օգոստոսի 10-ի նամակում Ս. Աղամալյանը սրտնեղում է Պատմության տպագրության դանդաղ ընթացքի համար³⁷։ Թեև Զամյանը նույնպես մտահոգ էր ու

զարգացման գործում, «Բաղմավկա», 1969, № 8—10, 1970, № 9—10, Գ. Բ. Ջահուկյան, Փրարարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 303—342։

³³ «Բաղմավկա», 1981, № 3—4, էջ 327, ծան. 71։

³⁴ Նույն տեղում, ծան. 72։

³⁵ Առաջին հատորի տպագրությունը սկսվել է 1785 թ. մարտին և ավարտվել է 1786 թ. դեկտեմբերին, երկրորդ հատորինը՝ 1786 թ. կեսին և 1787 թ. օգոստոսին, իսկ երրորդ հատորինը սկսվել է 1787 թ. սկզբներին և ավարտվել 1788 թ. դեկտեմբերին (տե՛ս «Բաղմավկա», 1981, № 3—4, էջ 327—330)։

³⁶ Հատորների տպագրության ընթացքն արագացնելու համար Ս. Աղամալյանը առաջարկում էր բաղմավատկել դրաշարների թիվը, վարձել իտալացի գրաշարների և նրանց սովորեցնել հայերեն։

³⁷ «Բաղմավկա», 1981, № 3—4, էջ 331։

անհանգստացած հատորների տպագրության դանդաղ ընթացքի համար (ե՛ր վաղուց սկսանք տպագրել Պատմությունը՝ Հայոց, բայց դեռ ոչինչ է վճարվել, եւ եթէ այսպէս զնայ, ըստ ուղիղ հաշուի՝ յետ վեց ամաց՝ հազիւ կ'աւարտւի, — գրեւմ է նա 1785 թվականին)³⁸, սակայն շարունակում էր իր բժախնդիր սրբազրական-համընդհանուր աշխատանքները։ Պատմության հատորներին տպագրության համար պատասխանատու Ստ. Ասլիկյանը քանիցս բողոքում է Չամչյանի նման աշխատանքի դեմ՝ 1788 թ. օգոստոսին դրած իր նամակներից մեկում նա Չամչյանին մեղադրում է՝ երրորդ հատորի վերջնական տպագրությունը որեւորդ անգամ հետաձգելու համար³⁹։

Վերջապես, 1788 թ. կենիւն ետեւող հատորի վերջին տրամադրված մասունքներն ուղարկվում են տպարան, եւ Չամչյանը կարող էր իրեն իրավունք վերապահել գրելու, թե՛ ազատեցայց՝ ի տառապանաց՝ այսպիսի քրեական գործով՝ աւարտել տպագրութեանն⁴⁰, Այսպիսով, ինչպես ակնհայտ է, Պատմության շարագրում աշխատանքները սկսվել են 1780 թ. սկզբներին և շարունակվել ընդհուպ մինչև տպագրության ավարտը, այն է՝ 1788 թ.։ Ինքը՝ Չամչյանը, դրում է, որ Պատմության շարագրանքը տեւել է ութ տարի։ «յորժամ սկսայ զՊատմութիւնն՝ թողի զայն յուր ամաց հետեւ»⁴¹։

Հայ սփռված կյանքի բոլոր հանգուցակներում ժողովրդի պատմական ուղու բացահայտման ու արժեքավորմանը նվիրված այս գիրքն ընդունվեց մեծ խանդավառությամբ։ Լինելով հայրենասիրության և ազգային ինքնաճանաչողության արտահայտություն, այն ժամանակակիցներին ու երիտասարդ ընթերցողներին նշանակալից չափով օգնեց ճանաչելու իրենց որպես ժողովուրդ՝ սեփական պատմության հիման վրա, «Պատմութիւն Հայոցի» երևան գալը պայմանավորված էր ոչ միայն ազգային ինքնաճանաչման ու ազգային գիտակցության բնական թելադրանքով, այլև օտարների լծի տակ հեծող հայ ժողովրդի հասարակական-քաղաքական զարթոնքով։ Ազգային ինքնության կորստի վտանգը հայ մշակույթի գործիչներին ստիպում էր դիմելու այնպիսի բեմատիկայի, որը ժամանակակիցներին ծանոթացնում էր հայ ժողովրդի հերոսական անցյալին, նրանց մեջ վառ էր պահում հայրենասիրությունը և կոչ էր անում թոթափելու օտարի լուծը։ Այս առումով էլ հենց պետք է բացատրել Չամչյանի երկանսիրության մեծ համբավը ոչ միայն իր ժամանակներում, այլև հետագայում։ Վեր հանելով ու դրվատնելով օտար բռնակալությունների դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարը, Չամչյանը նպատակ ուներ ոգևորել իր երիտասարդ հայրենակիցներին, նրանց դաստիարակել ազգային հպարտության զգացումով, ոգեկոչել անցյալի պատմական, հերոսական ու դրամատիկ դրվագները, պատգամախոսել հերոսների ու դուրսագունների անունից։ Չամչյանը լավ էր գիտակցում, որ անցյալի փառաբանումն ու իդեալականացումը համընկնում էր հայ ժողովրդի հոգևոր, հասարակական-քաղաքական ու բարոյադաստիարակչական պահանջներին։ Դա է պատճառը, որ այդ մտայնությունը կարմիր թելի պես անցնում է նրա բոլոր հատորներով։ Հերոսական պայքարով լի անցյալի փառքը հակադրելով իր օրերի անհրապույր իրականությանը՝ Չամչյանը գրում է. «Այժմ փոխանակ թագաւորութեան տիրեաց ստրկութիւն, փոխանակ իշխանութեան ժամանեաց անշքութիւն. փոխանակ յաղթութեան յաճախեաց հարուած. փոխանակ անդորր խաղաղութեան՝ որում մարթ էր ակն ունիլ, արմատացաւ անդորր խռովութիւն, և տարբացաւ անզօղելի անմիաբանութիւն»⁴²։ Ո՞րն էր այդ իրականությունից դուրս գալու ելքը։ Չամչյանի հատորների ընդհանուր հայրենասիրական նպատակասլացությունն առաջ էր բերում խորատեսություն օտար լծի հանդեպ և այդ պայմաններից ազատագրվելու բուռն ձգտում։ Պատմության հայերին կոչ էր անում համախմբվել ու միավորվել՝ «շայլեմանց և գազանաց»⁴³ իշխանության տակ գտնվող հայրենիքը ազատագրելու համար։

Սակայն Չամչյանը Հայաստանի պատմության հարցերը, այդ թվում և օտար բռնակալությունների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի դրվագները, քննել է իդեալիստական դիրքերից։ Չամչյան-պատմաբանը կրոնական ջերմեհոսողությամբ հավաստիացնում է, թե պատմության ելնէջները, թագավորական հարստությունների փոփոխվելը, օտար տիրապետություն—

³⁸ Նույն տեղում, էջ 325։

³⁹ Նույն տեղում, էջ 329—330։

⁴⁰ Նույն տեղում, էջ 314։

⁴¹ Նույն տեղում։

⁴² Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. 9, Վենետիկ, 1786, էջ 417։

⁴³ Նույն տեղում, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 43։

ներքո ու պատերազմներն՝ «ամենակալ ձեռին տեսնութեամբ կատարի», որը «կարգէ զամենայն անսահման իւրով իմաստութեամբ և դարմանէ և խնամէ զամենայն քաղցրութեամբ և վարէ պիտիութեանս ամենայն՝ յանդիման վախճան»⁴⁴։ Այսպիսով, Չամչյանը պատմական իրադարձությունները դիտում է որպէս գերաշխարհիկ էակի կամքի արտահայտություն։ Նրա պատմափայլեցողության հենք լայն կողմերի վրա էր, որ իր քննադատական շեշտը դրեց՝ Մ. Նալբանդյանի⁴⁵։ Տեղի ուղծությունն ու հոդվածի բնույթը հնարավորություն չեն տալիս ավելի մանրամասնորեն վերլուծելու Չամչյանի պատմագիտական հայացքները, ուստի բավարարվում ենք վերոնշյալով⁴⁶։

Երկարատև ծանր աշխատանքը «Պատմութիւն Հայոցի» վրա, որը Չամչյանին իրավունք էր տալիս գանգատվելու, թե օգնական իմ կերպ այս գործն և նորոգութեամբ լարված պարպունքները, բացասարար են անդրադառնում նրա առողջության վրա. զգացնել է տալիս նաև հին հիվանդությունը։ Միսթարյան միաբանության վարչության որոշմամբ 1789 թ. սեպտեմբերին նա ազատվում է դաստիարակի պաշտոնից և առողջությունը վերականգնելու նպատակով ուղարկվում Ավստրիայի ու Հունգարիայի առողջարանները։ Այդ մասին Ստ. Մելքոնյանն իր նամակներից մեկում գրում է. «Եւ այս տալոյ նմա (Չամչյանին—Ա. Ու.) սակաւ մի հանգիստ, քանզի ի կան ի վանս՝ անգործ ոչ կարէ մնալ, եւ ի պարապիլն ի գործ՝ շարաշար պարապիլ և ամենայն հողով ընկղմի ի գործ, և վնասի»⁴⁷։ Նախ նա անցնում է Տրիեստ, իսկ այնուհետև՝ Պաշպալով քաղաքը, որտեղ մնում է մինչև 1790 թ. ապրիլը։ Այստեղ Չամչյանը ժամկետով է մանկավարժական բուհն գործունեությունը։ Նրա անդուշ շանքերի շնորհիվ տեղի հայկական վարժարանն ընդարձակվում և սկսում է զգալի դեր խաղալ հայ իրականությունից կտրուկված գաղթաբնակի նոր սերնդի հայեցի դաստիարակման գործում։ Նրա օրոք վարժարանի աշակերտների թիվը հասնում է շուրջ վաթսուինի։ «Աշխատ եղև Եղիսարէլ քաղաք, աշխատ եղև և աշխատանք ծնաւ ծնունդ բարի. ծնաւ զպարտուն երեւելի, ծնաւ արդարեւ ցաւօք. ծնաւ և վաստակօք. աշխատութիւն իւր էանց. ցաւք իւր փարատեցան, և վաստակք իւր տեսին. զարգասին։ Այլ գործ մեծ է սնուցանել, պահել և պաշտպանել»⁴⁸,— գրել է Չամչյանը քաղաքի դպրոցի մասին։ Ավելորդ չէ նշել, որ նա պաշտպանում էր նոր տիպի դպրոցներ հիմնադրելու գաղափարը և նրա դրամ գոյություն ունեցող հայկական դպրոցների վերակառուցման ստանդարտը։ Ժամանակի հայկական դպրոցների ծայրահեղ անմիսթար վիճակը հասկանալիորեն չէր գոհացնում Չամչյանին, ուստի նա մտորում էր հիմնովին վերափոխել դրանց ծրագրերն ու պահանքները, որոնք պիտի արմատապես տարբերվեին նախորդներից։ Գիշերօթիկ դպրոցներին համար նրա առաջարկած ծրագիրը իր ժամանակների համար կատարյալ կարելի է համարել։ Այն մի քանի անգամ բարձր էր կանգնած հայ իրականության մեջ գոյություն ունեցողներից և հավասարվում էր ֆրանսիական ու ավստրիական առաջնակարգ միջնակարգ դպրոցների ծրագրերին։ Կողմնակից լինելով դպրոցական գործի վերակառուցմանն ու աշխարհիկ կրթության գերադաս լինելու գաղափարներին, այնուհանդերձ, Չամչյանն ի վիճակի չէր և չէր էլ կարող դպրոցական այդ ծրագրերում տեղ շտալ կրոնաբարոյական դաստիարակությանը։ Նա բնական էր համարում կրոնի դասավանդման անհրաժեշտությունը հասկանալի մարդու բարոյական դաստիարակության գործում։

Հետաքրքիր է ծանոթանալ նաև նոր տիպի դպրոցներին առաջադրվող՝ Չամչյանի մշակած ևսումնական ծրագրի հետ։ Այստեղ առաջին պլանի վրա է գտնվում բնական ու հումանիտար ուղղությունների դասավանդումը։ Այսպես, Չամչյանի ծրագրի համաձայն գիշերօթիկ դպրոցի (որն ինքը «աքադեմիա» է անվանում) աշակերտներն ուսանելու էին լեզուներ՝ հայերեն, հունարեն, լատիներեն և այն երկրի լեզուն, որտեղ գտնվում էր դպրոցը, քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, իրավագիտություն (քաղաքացիական իրավունք և եկեղեցական իրավունք), հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, ժա-

⁴⁴ Նույն տեղում։

⁴⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1948, էջ 222 և այլն։

⁴⁶ Այդ մասին տե՛ս մեր «Միջայել Չամչյանի պատմագիտական հայացքների գնահատման հարցի շուրջը» («Բանբեր Երևանի համալսարանի», 1981, № 2, էջ 144—151) հոդվածը։

⁴⁷ «Բաղվաժնագ», 1981, № 3—4, էջ 352։

⁴⁸ Բ. Սարգսյան, Երկհարյուրամյա կրթական գործունեություն Վենետիկ Միսթարյան միաբանության, հ. Ա, Վենետիկ, 1936, էջ 12։

մանակագրություն, տրամաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, մետաֆիզիկա, բնագիտություն (բնագիտություն), աստղաբաշխություն, քաղաքավարություն-մարդավարություն (քաղաքականություն), երաժշտություն, նկարչություն, խաղեր, սոստվածաբանություն⁴⁹։

Հատկանշական է, որ դպրոցի նպատակը Չամչյանը նախ և առաջ տեսնում էր «ծաղաղ-փերում» դեգերող հայության բեկորներին հայեցի պահելու և դաստիարակելու մեջ⁵⁰։ Այդ անթիվ նա գրում է, «Յոտար քաղաքներու մեջ ուսանող մանկտին՝ ավելի նորասիրություններ, ախտեր ու անկարգություններ պիտի սորվի, մանավանդ պիտի մոռնա հայերեն լեզուն և պիտի օտարանա հայրենի քաղաքեն ու ընտանեկան հարկեն», իսկ հայկական դպրոցներին՝ անկայունության պայմաններում «փոխանակ մոռացության, հայկական լեզվին՝ քաղ հայկաբանության և հայկական իրերու կատարյալ տեղեկություններ պիտի ուսանի»⁵¹։

Չնայած հայ գաղութի հորդորներին (ազի բազում մխիթարություն եղեւ նա մեզ և ծողովորդեանս)՝ Չամչյանը փորձիչապես վերականգնելով առողջությունը, վերադառնում է ս. Ղազար։ Այդ ժամանակ Չամչյանը հրավեր է ստանում Կ. Պոլսից՝ այնտեղ պաշտոնավարելու՝ նախարկով, սակայն հրաժարվում է, պատճառաբանելով, թե «խաղաղ տաղավաղեալ եմ ի՞նչ զոլորեն»⁵²։ որոյ եւ իցէ քաղաքի, յամենայնէ՛ ձանձրացայ՝ ի վերականգնեմէն, ի դասաւարտեմէն, ի խոստովանահայրութենէ ևն. ևն. միայն՝ գրութիւնք կարէ զիս մխիթարել⁵³։

Չամչյանը հոգեվիճակի և ֆիզիկական տկարության բուժիչ միջոցը դարձյալ դրական աշխատություններով զբաղվելն էր, որոյ, Չամչյանի խոստովանությամբ, իր միակ մխիթարությունն էր նրա վեներական գործունեության երրորդ շրջանը (1790—1794)՝ կտրուկ տարբերվում է երկրորդից։ Այս անգամ նրա հետաքրքրասիրությունները բեկովում են կրոնական ու աստվածաբանական բնագավառների վրա։ Գեոռն 1788 թ. գրած մի նամակում Չամչյանը հայտնում է, որ ինքը յուսով ձեռնարկելու է սաղմոսների մեկնությանը, մի աշխատանք, որը սկսել էր դեռևս 70-ական թվականներին և ընդմիջարկել Պատմության պատճառով։ Եվ ահա այժմ նրա տի-տանական աշխատասիրությունն ու խոր գիտելիքները զործադրվում են սաղմոսների մեկնության համար։ Քանի որ Չամչյանին չլին բավարարում հրապարակի վրա գտնվող սաղմոսների հայերեն թարգմանությունները, ուստի նա, 60 տարեկան հասակում, ձեռնամուխ է լինում երաժիշտների ուսումնասիրությանը և այնքան է հմտանում այդ լեզվի իմացության մեջ, որ ակում է ազատորեն օգտվել սաղմոսների երաժշտական տեքստերից։ 1793—1794 թթ. նա մի քանի ռեզումե անցնում է Կ. Պոլսի, տեսակցում հրեա ուղղափառների հետ⁵⁴ և հիմնավոր գիտելիքներ ձեռք բերում Թալմուդի, սաղմոսների ու հրեական կրոնական արարողությունների վերաբերյալ։ Այդ աշխատանքների արդյունքը հանդիսացան սաղմոսներում տեղ գտած ավագ օրհնություններին նվիրված գիրքը⁵⁵ և սաղմոսները մեկնող տասը մեծագիր հատորները⁵⁶։ Այստեղ հեղինակը սաղմոսների հայերեն տեքստերը համեմատում է դրանց լատինական, արաբական, եթովպական, ասորական և հունական թարգմանությունների հետ և ապա, երաժշտական ընթերցումով, ներկայացնում սաղմոսների հայերեն հնագույն թարգմանությունների նախնական ու հարազատ օրինակները՝ մանրամասն ծանոթագրություններով և բացատրություններով։ Սա բնագրագիտական, քննադատական և վիթխարի աշխատանքի արժանիք է, որն այնպես էլ իր երկրորդը չունեցավ հայ աստվածաբանական գրականության մեջ։ Կարելի է միայն ավստոսալ, որ Չամչյանի բեղմնավոր գրելը հետ այսու ի գործ դրվեց հիմնականում աստվածաբանական-կրոնական ուսումնասիրությունների բնագավառում, ուր նա ունեցավ առատ հումք⁵⁷։ Հասկանալիորեն կրոնական բնույթի նրա երկասիրություններն անխուս վկաններ

49 Նույն տեղում, էջ 19։

50 Նույն տեղում, էջ 13—14։

51 «Բազմավեպ», 1981, № 3—4, էջ 353։

52 Հ. Ալան, Մխիթարյանք գրականության հանդեպ (1701—1901), Վենետիկ, 1902, էջ 40։

53 Մ. Չամչյանց, Նուագարան օրհնությունաց, յորում մեկին աւագ օրհնութիւնք Սաղմոսարանին մերոյ, Վենետիկ, 1801։

54 Մ. Չամչյանց, Մեկնութիւն սաղմոսաց, հ. Ա—Ժ, Վենետիկ, 1815—1823 (յուրաքանչյուր հատորը 600—800 էջի սահմաններում)։

55 Մ. Չամչյանց, Հրահանգ եօթնեկի, եօթնեակ և օթամբք դասաւորաւ, Վենետիկ, 1802 (նույն տարում երկու հրատարակությամբ), «Պատկեր տօնից սուրբ Աստուածածնին», Վենետիկ, 1805, «Անդան խնկոց», Վենետիկ, 1816 (վերահրատարակվել է 1817 թ.), «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննոս (անտիպ) և այլն։

ևն իրենց հեղինակի մեղվաշան աշխատասիրության և աստվածաբանական խոր գիտելիքների։ Մ. Չամչյանի առողջական վիճակի հետագա վատթարացման պատճառով⁵⁶ միաբանության վարչությունը որոշում է նրան ուղարկել իր ծննդավայրը՝ կազդուրվելու համար⁵⁷։ 1795 թ. սկզբներին նա ընդմիջտ տեղափոխվում է Կ. Պոլիս և ստանձնում տեղի Մխիթարյան-ների մեծավորի պաշտոնը։ Բացի հոգևոր-հասարակական գործունեությունից, նա վերսկսում է նաև իր պատմագիտական աշխատանքները։ Երեքամյա տքնաշան աշխատանքի արգասիք է նրա «Համառոտ պատմություն Օսմանցուց» երկասիրությունը, որ 1800 թ. նոյեմբերին արդեն պատրաստ էր տպագրության։ Սույն հանգամանքը հավաստում է Ի. Փափազյանը 1800 թ. նոյեմբերի 10-ին Չամչյանին գրած նամակում, թե արդեն գիրքը «հնար է տպագրության» անխիղճ ի լոյս ընծայել⁵⁸։ Նկատելի է, որ Չամչյանը գրքի խմբագրումը հանձնարարում է ժամանակի ամենաազդեցիկ ընդհանուր մտավորականներից մեկին՝ Գեորգ դպիր Պալատեցուն, որի հետ պայված էր տարիների ընթացքում։ Սակայն ինչ-ինչ պատճառներով՝ ցարդ Չամչյանի այս երկասիրությունը մնացել է անտիպ⁵⁹։ Այս շրջանում Չամչյանը վերսկսում է նաև իր մանկավարժական գործունեությունը։ Նա լայն մասնակցություն է ունենում հայկական դպրոցներ հիմնադրելու և դրանք դասագրքերով ու հմուտ ուսուցիչներով ապահովելու գործում⁶⁰։ Չամչյանին հուզել է նաև հայկական բարձրագույն դպրոց ստեղծելու դադափարը, որտեղ կարող էին իրենց ուսումը շարունակել Կ. Պոլսի և այլ քաղաքների միջնակարգ դպրոցների շրջանավարտները։ Արհեստորդ հղած մի շարք նամակներում նա, տեղեկացնելով այդ ուղղությամբ իր մշակած ծրագրերի մասին, շեշտում էր Եվրոպայի որևէ համալսարանական քաղաքում (առաջարկում էր իտալական Պադուա քաղաքը)՝ հայկական բարձրագույն դպրոց բացելու անհրաժեշտությունը⁶¹։ Կ. Պոլսի Մխիթարյանները Չամչյանի զխավորությամբ մշակում և աբբահորեն ներկայացնում ապագա հայկական բարձրագույն դպրոցի ուսումնական ծրագիրը։ Այստեղ հարևոր տեղ էր հատկացված հատկապես հայագիտական առարկաներին և լեզուների (հայերեն, հունարեն, իտալերեն, ֆրանսերեն և այլն) դասավանդմանը։ Հատկանշական է, որ և՛ Չամչյանը հետամուտ էր նաև հայկական դպրոցներն ուսումնական անհրաժեշտ ձեռնարկներով ապահովելու աշխատանքին։ Անշուշտ, այդ նպատակն էր նա հետապնդում, երբ համառոտում էր իր աշխատասիրած բերականությունը՝ առ ի դիրություն ուսանողաց։ Անհրաժեշտ էր դպրոցներին տրամադրել նաև հայոց պատմության վերաբերյալ որևէ դյուրամբնելի ձեռնարկ։ Նրա ստվարածավալ և հատորյակը չէր կարող ծառայել այդ նպատակին, ուստի 1800-ական թվականներին նա սկսում է այն «համառոտել զնոյն աստանոթ»։ Լոկալ առաջի կարճ էր կարճոյ զանց»՝ որը անցին ընդ հայս։ Նման ձեռնարկի անհրաժեշտության մտահոգությամբ է տոգորված 1808 թ. փետրվարի 10-ին Ստ. Ազոնցին հղված Չամչյանի նամակը, որ ասված է. «Եթե հնար լինի ի տպագրութիւն մատուցանել զհամառոտութիւն Պատմութեան Հայոց, եթէ դժուար լինի և եթէ զտաճկերէն, ի բանիլ ճանապարհաց առաքելի այդր, զի փափաքելով փափարին ժողովուրդ յառնուլ»⁶²։ Նվաճա, «Պատմութիւն Հայոցի» երեք հատորների համառոտման ու խմբագրման հաշվին Չամչյանը ազգային դպրոցներին է տրամադրում հայոց պատմության մի ամփոփ և խնամքով կազմված ձեռնարկ⁶³, որը կարևոր դեր խաղաց մատաղ սերուն-

⁵⁶ 1792 թ. գրած նամակներից մեկում նա գանգատվում է առաւել եւս ի կողմանէ ընդդէմ խոտվելոյ է ընդ իս» (տե՛ս «Բազմավեպ», 1981, № 3—4, էջ 354)։

⁵⁷ Մ. Ավագբեկյան, «Ժամանակագրութիւն վանաց», հ. 2, էջ 8, 33ա, տե՛ս նաև «Բազմավեպ», 1981, № 3—4, էջ 355։

⁵⁸ Ս. Զեմեմյան, Գեորգ դպիր Տեր-Հովհաննիսյան (Պալատեցի) և Մխիթարյանները (տե՛ս «Բազմավեպ», 1982, № 1—2, էջ 134)։

⁵⁹ Մ. Մազար-Բեկիլյանցի վկայությամբ (նշվ. աշխ., էջ 813), Չամչյանը հեղինակել է նաև լատիներեն-հայերեն մի ստվարածավալ բառարան, որի ձեռագիրը պահվում է միաբանության մատենադարանում։ Չեն տպագրվել նաև Չամչյանի Վենետիկից Բասրա և Բասրայից Վենետիկ կատարած ճանապարհորդության նոթերը, որոնք, նույն Թեոփիլյանցի վկայությամբ, հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Չամչյանի քարոզչական գործունեության և նրա այցելած վայրերի մասին։

⁶⁰ Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 37—43։

⁶¹ Նույն տեղում։

⁶² Ս. Զեմեմյան, նշվ. աշխ., էջ 135, ծան. 60։

⁶³ Մ. Չամչյանց, Խրախճան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811 (տե՛ս նաև սույն հրքի վերահրատարակությունը՝ Կալկաթա, 1834)։ Նկատի ունենալով իր թրքախոս հայրենակարներ 9—6

դին ազգային ինքնագիտակցության ու ինքնաճանաչողության ոգով դաստիարակելու գործում։ Սուր. Մելքոնյանի մահվանից հետո նոր արրահոր ընտրություններին մասնակցելու համար Չամչյանը 1800 թ. նոյեմբերին մեկնում է Վենետիկ։ Միարանությունը շահագրգռված էր որպեսզի Չամչյանը այլևս չլքեր ս. Ղազարը, ուստի նրան ընտրում են միարանության վարչական կամմիսիոնի խորհրդական և Մխիթարյան վարժարանի վերատեսուչ։ Մյուս կողմից, Կ. Պոլսի հայ կաթոլիկ համայնքը կարիք ուներ նրա ներկայությանը, որովհետև Չամչյանի բազում գիտելիքներն ու մեծ հեղինակությունը խիստ անհրաժեշտ էին հայ լուսավորչական համայնքի և իրենց միջև դրություն ունեցող կրոնադավանաբանական կնճիռները հարթելու և ծագած վեճերը լուծելու համար։ Սակայն միարանությունը չէր կարող շանսալ իր նյութական ու ֆինանսական հենարանի՝ Կ. Պոլսի կաթոլիկ համայնքի ձայնին, և Չամչյանին հնարավորություն է տալիս նորից անցնելու իր ծննդավայրը։ Չամչյանի գործունեությունն այս վերջին շրջանը (1801—1823) հատկանշական է Կ. Պոլսի հայ լուսավորչական և հայ կաթոլիկական համայնքների մերձեցման և նրանց միջև դավանաբանական վիճարանությունները վերացնելու ուղղությամբ նրա ձեռնարկած փորձերով։

XVII դ. կեսից սկսած և ամբողջ XVIII դ. ընթացքում Կ. Պոլսի և Թուրքիայի մյուս հայաշատ քաղաքներում լուսավորչականների և հայ կաթոլիկների միջև փոթորկվող դավանաբանական պայքարը հասել էր գագաթնակետին։ Թուրքիայի հպատակ քրիստոնյաների շրջանում հռժեք կատարող լատին քարոզիչներն իրենց կրոնական-պրոպագանդիստական գործունեությունը որոշ համախոհներ էին շահել հայերից։ Խրախուսվելով լիբրալական կաթոլիկ միապետների և Հռոմի կղերապետության կողմից, հենվելով հայ լատինամոլների վրա՝ կաթոլիկ քարոզիչներն էլ ավելի լայն գրոհ ձեռնարկեցին ազգային ավանդույթներին ու ազգային եկեղեցուն հավատարիմ հայ-լուսավորչականների դեմ։ Հայ կաթոլիկներին արգելվեց հաճախել ազգային եկեղեցիները և կատարել հայ եկեղեցու արարողությունները։ Լուսավորչական եկեղեցում միջոցով կատարված մկրտության, ամուսնության ու թաղման ծեսերը համարվեցին անվավեր և ապօրինի։ Հայ կաթոլիկներին խստիվ արգելվում էր ջիփում ունենալ լուսավորչականների հետևյալ։ Այդօրինակ միջոցներով հայ լատինամոլները հայ ժողովրդի, նրա ազգային եկեղեցու դեմ հայտարարեցին դժման ու անհաշտ պատերազմ, որն անհաշիվ զոհեր, անասելի նեղություններ և մեծագույն դժբախտություններ բերեց իր հետ։ Կաթոլիկ միսիոներների ու նրանց ազգադավ հայ գաղափարակիցների գործողությունները, որոնք մասնատում էին հայ ժողովրդի առանց այն էլ թուլլ ու ջլատված ուժերը, հասկանալիորեն պետք է զգաստացնեին հայ ժողովրդին ու նրա հոգևոր պետերին՝ կասեցնելու Հռոմի այդ համընդհանուր գրոհը։

կիցներին ազգային պատմությանը ծանոթացնելու հույժ կարևորությունը, Չամչյանը, որը հույսովալ տիրապետում էր թուրքերենին, այս գիրքը հրատարակում է նաև թուրքերեն՝ տե՛ս՝ Ռ. Պ. Օբելի, Գրուզինские рукописи института востоковедения АН СССР, М.—Л., 1956, с. 57)։ Անկախ սույն թարգմանությունից, գրեթե միաժամանակ Պլատոն Իոսելիանը վրացերեն է թարգմանել նաև Չամչյանի Պատմության երկրորդ հատորի 30—40-րդ գլուխները (Րաքառություն 34-րդ գլխի, տե՛ս Ս. Մ. Մուրադյան, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII в., Ереван, 1966, с. 169—170)։ XIX դ. 40-ական թվականներին ռուսերեն են թարգմանվել Չամչյանի Պատմության մեջ տեղ գտած Հայոց եկեղեցական ժողովներին վերաբերող հատվածները (այդ թարգմանությունը տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1498)։

64 Մ. Օբելիան, Ազգապատմություն, մասն երկրորդ, Կ. Պոլսի, 1914, էջ 2833, 2907, 3030—3081, 3161—3163 և այլն։

Մ. Չամչյանը և Մխիթարյան առաջադեմ այլ գործիչներ (Գ. Այնթափցի, Ղ. Ինճիճյան և այլք) շատ լավ լին գիտակցում հայության համար ստեղծված այդ իրավիճակի ամբողջ վերահասարակականությանը։ Մխիթարյանների այս խումբը փորձում էր որոշ գիշումների գնով և չորս-մի և չորս հավատարմության արտահայտություններով հասնել ևրկկողմանի համաձայնության և հանդարտեցնել ու ապա վերացնել դավանաբանական խիստ սրված պայքարը։ Նրանք զարգացնում էին հետևյալ տեսակետը. քանի որ հայոց եկեղեցու վարդապետությունը Հռոմի պապերից պաշտոնապես չի դատապարտվել, ապա հայ ժողովուրդը ես ուղղափառ է և կարիք չկա նրա մոտ քարոզիչներ ուղարկելով ժողովրդի խաղաղությունը վրդովել։ Դրանով նրանք փորձում էին դիմագրավել հայ ժողովրդին հերձվածող հորջորջող լատինամոլների և վերջիններիս ոգեշնչող լատին քարոզիչների պառակտողական լայն գործողություններին, որոնց նըպասակը «մոլորյալ» հոտը Հռոմի փարախ առաջնորդելն էր։

Չամչյանն այն առաջին հայ կաթոլիկ գործիչներից էր, որ ճիշտ դիրքորոշվեց հայության համար ստեղծված բարդ իրադրության մեջ, հասկացավ, որ այդ խառնակ հանգամանքներում հայ ժողովրդի միակ զենքը ներքին միասնությունն է, ինչպես նաև կրոնական հաշտությունը։ Ուստի պատահական չէ, որ նա իր պայքարի սլաքն ուղղեց նախ և առաջ հայ ժողովրդի քաղաքական միասնությունը խաթարող, նրա ներքին ուժերը ջլատող և ազգային դիմագիծը կորցրած լատինամոլների դեմ։ Հասկանալով, որ լատինամոլները Հռոմի ձեռքին կույր գործիք են և նրա քաղաքականության հիմն սպասավորները՝ Չամչյանն առաջարկում էր նրանց մեկուսացնելով միասնադեմքի և ապա ընդհանուր ճակատ ստեղծել նրանց պառակտողական գործողություններին դիմագրավելու համար։ Նախկին Մխիթարյան Գ. Այվազովսկին իր աշխատություններին մեկուսում բերում է Չամչյանի հետևյալ խոսքերը, որ նա ուղղել է զաղափարակից աշակերտներին. «Ֆոնեկներեն (լատինամոլներից—Ա. Ու.) հեռու որդեակք, հեռու. մեր խեղճ աղդին տունը քանդողն անոնք են»⁶⁵։ Այլ կապակցությամբ նա գրում է. «Յեւտին ժամանակս առաքելք Հռոմմայ (լատին քարոզիչներն ու նրանց հայ արբանյակները—Ա. Ու.) տարաձայնք ի Հայս սկսան յարիս խօսել զազգէն Հայոց և պէս պէս մոլորութիւնս յօգէլ ի բանս հաւատոյ... Եւ այսու ամենայնիւ որսացեալ և բազում ժողովրդականս հայոց ի թիկունս կոյս, յարգիւն ապա շփոթութիւն մեծի ի մէջ ժողովրդեան, աղմուկ և կոխ եղբոր ընդ եղբորս զմիմիանս կոչել հերետիկոս եւ մոլորեալս եւ հերձուած»⁶⁶։ Չամչյանը գիտակցում էր, որ ներհամայնքային պայքարը, հետևաբար դավանաբանական կրքերը կարելի էր հանդարտեցնել ևրկու հայ համայնքների կրոնական հաշտության ճանապարհով։ Սակայն աղքատ գաղափարի իրականացման համար մղվող պայքարում նա ստիպված հակադրվելու էր մի կողմից Հռոմի կղերականության հայաւայաց գործակալներին, մյուս կողմից՝ լուսավորչական եկեղեցու այն գործիչներին, որոնք իրենց ծայրահեղ թշնամական դիրքորոշմամբ փաստորեն նպաստում էին ազգամասնա դրամայի ծավալմանը։ Ուստի, նա պետք է փորձեր հաշտության եղբոր փնտրել ևրկու համայնքների միջև։

Մ. Չամչյանը լավ էր հասկանում, որ անհրաժեշտ էր իր որդեգրած դիրքորոշումն ուղղակիորեն պաշտպանող զուտ դավանաբանական ընդլայն մի աշխատություն, որը մեկընդմիջտ կապացուցեր հայ եկեղեցու ուղղափառությունը։ Դրանով իսկ, նրա կարծիքով, վերջ կտրվեին բոլոր տեսակի սխալաստիկ վեճերին, հետևաբար, նաև ներհամայնքային պայքարին։ Դեռևս 1770-ական թվականների կեսերին, այսինքն այն ժամանակ, երբ Չամչյանը ձեռնամուխ էր եղել «Պատմութիւն Հայոցի» շարադրմանը, դրան զուգընթաց, նա սկսում է շուրջ 40 տարի (1776—1815) աշխատել դավանաբանական հարցեր շոշափող մի փշիատության վրա։ Դա ժամանակին մեծ աղմուկ հանած Վեհաճա հաւատոյ, յորում հաստատի ուղղափառութիւն Հայաստանայց եկեղեցւոյ սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Հայաստանեայց Լուսաւորչէ մինչև ցայսօր խորադիր կողմ աստվածաբանական մեծածավալ (շուրջ 900 էջ) երկասիրությունն էր⁶⁷։

65 Գ. Այվազովսկի, Ուրուագիծ ոգույ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վեներաբոյ, Փարիզ, 1857, էջ 44։

66 «Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին», կազմեց Հ. Թոփչյան, Վենետիկ, 1962, էջ 281—282։

67 Աշխատությունը ոչնչացվել է Հռոմի հավատաքննության գերագույն ատյանի որոշմամբ։ Լույս է տեսել միայն նրա համառոտված տարբերակը, որը շատ հեռու է մայր օրինակն ամբողջականորեն ներկայացնելու որևէ հավակնությունից։ Հրատարակվել է Վեհաճա հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ (Կալկաթա, 1873) խորագրով։

«Վահան հաւատոյն տեսական զենք էր, որն ուղղված էր թե՛ կաթոլիկ քարոզիչներին և թե՛ նրանց քաղաքականության կառքին լծված հայ լատինամոնիների դեմ, որոնք, ըստ հեզի- նակի «րանիւք ստութեան և խորհրդութեան զազոն ողջոյն պղտորեն, երկպառակութիւն ի մէջ արկանեն, և խռովութեամբ լնուն, և զոմանս ի ծանր ծանր վնասս մատենեն»⁶⁸, Դա շատ պարզ ներկում է նաև դրքի բովանդակությունից: Աշխատությունը, որի տասը գլուխներից յուրա- քանչյուրում մեկ առ մեկ հերքվում էին հայ եկեղեցու տասը կարծեցյալ «մոլորություններ» և այն ներկայացվում որպես ուղղափառ, միշտ Հռոմին միաբան, ուղղված էր կաթոլիկ քարոզիչ- ներին այն պնդումների դեմ, թե՛ հայ ժողովրդի համար անխուսափելի պահանջ է Հռոմին միա- նալը: Չամչյանը հավատացնում էր, թե՛ դրա կարիքը չկա, քանզի հայոց եկեղեցին սկզբից եկե- ուղղափառ է եղել և մնում է այդպիսին: Ճանաչելով հայ եկեղեցին ուղղափառ և մերժելով լատինամոնիների կողմից նրան ներկայացվող հերետիկոս, հերձվածող որակումները, Չամչյա- նը դեմ էր դուրս գալիս նաև պապական պաշտոնական այն տեսակետին, որ միայն հռոմեա- կան եկեղեցին է ուղղափառ: Դա նշանակում էր, որ նա հայ ժողովրդի և՛ լուսավորչական, և՛ կաթոլիկ հատվածներին ճանաչում էր որպես ուղղափառ եկեղեցու անդամներ: Դեռ ավելին, Չամչյանը պնդում էր, որ ինչպես լուսավորչական, այնպես էլ կաթոլիկ եկեղեցին ընդհանրա- կան քրիստոնեական եկեղեցու լիիրավ, համազոր և համահավասար անդամներ են: Ուստի վերջինս ոչ մի առավելություն և առաջնություն չունի առաջինի նկատմամբ:

Մ. Չամչյանն ու նրա քաղաքականության շատագուց մյուս Մխիթարյաններն իրենց տե- սական ու պրո-կտիկ գործունեությամբ հանդես էին գալիս Հռոմի պրոպագանդայի դպրոցի հայ սաների ձևավորվող այն վտանգավոր գաղափարի դեմ, որի համաձայն կաթոլիկությանը հի- տետղ հայերը նոր ալգ են, որը ոչինչ ընդհանուր չունի «հերետիկոս» լուսավորչական հայերի հետ: Եվ, եթե Վատիկանի խրախուսած ազգատյաց լատինամոնիները օկրոնք ազգության փոխե- լով, սկսան իսկ օտարի նման զիրար թշնամանալ և անպատկություն համարելով՝ հայ անունը մերժել և հեռանալ ի նմանե»⁶⁹, ապա Չամչյանը և նրա գաղափարակիցները, կաթոլիկություն- նից շրջադարձելով հանդերձ, բոլոր հայերին հաշտեցման և ազգային համախմբման կոչ էին անում: Դա համայն հայությանը մեկ միասնական ընտանիքի մեջ միավորելու անկեղծ, սրտա- լուրիս, սակայն դեռևս լուրջ հենք չունեցող ուղեգիծ էր:

Նայ ժողովրդի ներքին միասնության հայրենասիրական գաղափարը Չամչյանին ստիպում էր դիմելու ավելի գործնական քայլերի: Նա եռանդուն մասնակցություն է ունենում Կ. Պոլսի լուսավորչական և կաթոլիկական համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ հրա- վիրված խորհրդաժողովներին, որոնք նետապնդում էին երկու համայնքների միության գաղա- փարը: Չամչյանը կարծում էր, թե՛ եկեղեցի էր վաղուց ի վեր իր փայտալած երազանքների իրա- չունացման պահը և, որ ինքը վերջապես կտեսնի «դիսպոզիցիան և զմիաբանությունը ազգիս», զսկի եղբայրց մերոց առ միմեանս»⁷⁰: Սակայն նրան վիճակված չէր տեսնելու այնքան ցանկա- լի խաղաղությունը հայ համայնքում: Ո՛չ Ամենայն Հայոց կաթոլիկոսությունը և ո՛չ էլ Վա- տիկանը չէին խրախուսում այդ փորձերը: Դեռ ավելին, ինքը՝ Չամչյանը, քիչ մնաց կանգնե- ռվատիկանի հավատաքննության գերագույն ատյանի առջև: 1815 թ. մարտի 4-ին Անտոնյան միաբանության անդամ Պողոս վարդ. Փասիասյանը Չամչյանից զոդանում է նրա մոտ գաղտնի պահվող «Վահան հաւատոյն երկասիրությունը և ուղարկում Հռոմ, Դիրքը տեղի գիտական ու աստվածաբանական ջրջանակներում թողնելու համար: Այսպիսով տպավորություն, Շուրջ հինգ տարի շարունակ պապական պաշտոնյաները քննում էին «Չամչյանի գործը»: 1819 թ. մայիսի 5-ին կարդինալների և հավատաքննության գերագույն ատյանի միացյալ ժողովը, երկարատև վիճարանություններից հետո, վճռում է «թագուցանել զՎահան հաւատոյն», իսկ Չամչյանին էլ չնստարել դրա հեղինակ: 1819 թ. հունիսի 30-ին Պիոս Ե պապը վավերացնում է այդ վճի- ուրը⁷¹: Վատիկանի այդ ներողամտությունը պետք է բացատրել նրանով, որ այն լավատեղյակ էր լուսավորչականների հետ Մխիթարյանների միաբանողական փորձերին, ուստի հեռատեսու- րեն փորձում էր չզրգուկ նրանց և աստիճանաբար սառնեցնել Չամչյանի ու նրա հետևորդների միաբանական ու ազգասիրական զգացմունքները: Բացի այդ, Վատիկանին ձեռնառու չէր, որ- պեսպի իրենց կողմից ասարսափելի աստվածաբանի» (teologis terribilis)⁷² տիտղոսին ար-

68 Մ. Չամչյան, Վահան հաւատոյ, էջ 34:

69 «Խնդիր միութեան հայոց», Երկրորդ տպագրություն, Փարիզ, 1861, էջ 7:

70 «Լուսմա», Թիֆլիս, 1899, դիրք Բ, հուլիս, էջ 357:

71 Մ. Չամչյան, Վահան հաւատոյ, էջ 117:

72 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 138:

ժանացված Չամչյանը ներկայանար որպես մուրրալի Այս դեպքերից շատ շանցած, 1823 թ. նոյեմբերի 30-ին, 86 տարեկան հասակում Մ. Չամչյանը վախճանվում է և թաղվում Կ. Պոլսի Բերայի գերեզմանատանը:

Մ. Չամչյանը եղել է մեր մշակույթի ու հասարակական մտքի ամենախնայող ներկայացուցիչներից մեկը: Նա այն մտածողներից էր, որոնք իրենց ողջ գործունեությամբ պայքարել են հույ ժողովրդի ինքնության և նրա ազգային-քաղաքական ամբողջության պահպանման համար: Հատկապես նշանակալից է Չամչյանի հայագիտական գործունեությունը, որը մեծապես նպաստել է այդ համակարգի աշխուժացմանը և հետագա բուռն զարգացմանը: Նրա «Պատմութիւն Հայոց»¹ XVIII—XIX դդ. հայ պատմագիտական մտքի ամենաաչքի ընկնող կոթողներից մեկը, հավերժացրեց Չամչյանի անունը հայ պատմագիտության անդամատանում: Անուրանալի է նաև նրա դերը Յվրոպայի մշտնջենավոր հայագիտական կենտրոնի՝ Մխիթարյանների դպրոցի, համրավի և փառքի տարածման գործում: Այս հանգամանքը նկատի ունենալով, որ բանասեր Մ. Արևիկյանը, երբ գրում էր. «Չամչյանը միանգամից բարձրացնում է Մխիթարյանների անունը, որը մինչ այդ գրեթե հայտնի չէր և խոշոր ազդեցություն է թողնում հետագա սերունդների վրա»²,

МИКАЭЛ ЧАМЧЯН

(краткое описание жизни и деятельности)

А. А. УТУДЖЯН

Резюме

Микаэл Чамчян (1738—1823)—один из выдающихся армянских филологов. В 1785—1789 гг. в Венеции вышли в свет три тома его «Истории Армении», способствовавшие повышению самосознания армянского народа и процессу его консолидации. Значителен также вклад Чамчяна в дело развития грамматики армянского языка. Он строго ограничил грамматические законы грабара, очистив его от латинизмов и оставив потомкам совершенный для своего времени учебник грамматики (Венеция, 1779).

Чамчян был одним из эрудированных педагогов своего времени. В течение многих лет он боролся за преобразование школьного дела и основание высшей армянской школы.

¹ Մ. Արևիկյան, Երկեր, հ. 7, Երևան, 1970, էջ 548: